# Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

## ՀԵՌԱԳԻՐ

*Ամենայն Հայոց Հայրապետի Օծման տարեդարձի առիթով, հետեւեալ հեռագիրը յղուած է Մայր Աթոռ. —*

Երուսաղէմ, 2 Հոկտեմբեր 1989

Ձերդ Սրբութեան Գահակալութեան եւ Օծման 34րդ տարեդարձին ուրախ առիթով, հաճեցէք ընդունիլ մեր, Ս. Յակոբեանց Միաբանութեան եւ Սողիմահայ համայնքի ջերմագին շնորհաւորութիւնները, երկար ու երջանիկ օրերու լաւագոյն բարեմաղթութիւններով հանդերձ:

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ
Պատրիարք Հայ Երուսաղէմի

---

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ–ԲԵՄԱԿԱՆՔ

● *Կիր. 1 Հոկտ. —* Բարեկենդան Վարագայ Ս. Խաչի պահոց: *Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնատան մէջ: ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան:*

● *Ուր. 6 Հոկտ. — Նախատօնակը պաշտուեցաւ Ղպտաց Ս. Գէորգ վանքի եկեղեցւոյն մէջ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Սեւան Եպս.:*

● *Շբ. 7 Հոկտ. —* Ս. Գէորգայ զօրավարին: *Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գէորգ (Ղպտաց): ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթճեան: Աղօթ ու գործի թափօրները գլխաւորեց եւ քարոզեց Գերշ. Տ. Սեւան Եպս. Ղարիպեան, խօսելով սուրբին կեանքին ու մարտիրոսութեան մասին: Այս Միաբանութիւնը հիւրասիրուեցաւ Ղպտաց Տեսչէն:*

*— Կէսօրէ ետք, Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գաբրիկեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառով» մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր մեր վերնատան մէջ պաշտուեցան ժամերգութիւն եւ նախատօնակ: Այս կատարուեցաւ Տեօրթինական Ուղղափառաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Հոգշ. Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:*

● *Կիր. 8 Հոկտ. —* Տօն Վարագայ Ս. Խաչին (660): *Գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, մեր վերնատան մէջ: Այս, Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. մատոյց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ եւ նախագահեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգէն Ա.ի Օծման 34րդ տարեդարձին առիթով կատարուած «Հայրապետական Մաղթանքի» արարողութեան:*

● *Շբ. 14 Հոկտ. —* 72 աշակերտացն Քրիստոսի: *Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ներքին գաւիթին մէջ գտնուող Ս. Գէորգայ սեղանին վրայ: ժամարարն էր Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան:*

● *Կիր 15 Հոկտ. — Այսօր կատարուեցաւ Ռամլէի Ս. Գէորգայ վանուց տարեկան ուխտագնացութիւնը: Պատարագեց եւ քարոզեց Գերշ. Տ. Դաւիթ Եպս. Սահակեան, որ ներկայացուց Ս. Գէորգը իբրեւ տիպար արիութեան եւ անձնազոհութեան: Ներկայ էր մեծ թիւով ժողովուրդ, Երուսաղէմէն, Եաֆայէն եւ Հայֆայէն:*

● *Ուր. 20 Հոկտ. — Նախատօնակին ի Ս. Յակոբ Նախագահեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.:*

● *Շբ. 21 Հոկտ. —* Ս. Թարգմանչաց վարդապետացն մերոց (Տօն ազգային եւ եկեղեցական): *Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ Ս. Պատարագը մատոյց, ըստ սովորութեան, Ս. Թարգմանչաց Երկր. Վարժարանի Տեսուչը՝ Գերշ Տ Կիւրեղ Եպս. Գաբրիկեան: Գերշ. Տ. Դաւիթ Եպս. նախագահեց մեծանուն բարերար Գալուստ Կիւլպէնկեանի, տիկնոջ եւ ծնողաց հոգիներուն համար կատարուած տարեկան հոգեհանգստեան պաշտամունքին:*

*— Երեկոյեան ժամերգութեան աւարտին, Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս. Ուրար կրելու արտօնութիւն շնորհեց Ժառանգ. Վարժարանի բարձրագոյն կարգի աշակերտներ Ռաֆֆի Միսիսեանի եւ Փիէռ Ճիկէրճեանի:*

● *Կիր. 22 Հոկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնատան մէջ: ժամարարն էր Հոգշ. Տ. Գուսան Վրդ. Ալճանեան:*

● *Շբ. 28 Հոկտ. —* Ս. չորից Աւետարանչացն: *Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի գաւիթի Ս. Յովհաննէս Աւետարանչի մատրան մէջ: ժամարարն էր Հոգշ. Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:*

● *Կիր. 29 Հոկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ: ժամարարն էր Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Ժամկոչեան:*

● *Բշ. 30 Հոկտ. —* Ս. Յովսէփայ Աստուածահօրն: *Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Հայր Յովսէփի գերեզմանին վրայ: ժամարարն էր, ըստ սովորութեան, Տաճարին Տեսուչը՝ Հոգշ. Տ. Հայրիկ Վրդ. Գալայճեան:*

digitised by A.R.A.R.@

● Եր. 4 Նոյմ. — Ս. Երկոտասան վարդապետացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիրս։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան։

— Կէսօրէ ետք, Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս. Գազանճեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար։ Ս. Գերեզմանի և Խաչգիւտի այցելութիւններէն ետք, վերջինոյս կից Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ պաշտօնուեցան ժամերգութիւն և Նախատօնակ։ Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս։ Թափօրապետն էր Հոգշ. Տ. Գուսան Վրդ. Ալճաճեան։

● Կիր. 5 Նոյմ. — Գիւտ Խաչի: Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան և Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Լուսաւորիչ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Եղիշէ Ծ. Վրդ. Մանճիկեան (Անթիլիասի Միաբան) որ հիւրաբար կը գտնուէր մեր մէջ։ Ապա Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս., ամպհովանիի ներքև և Կենաց Փայտի մասունքն ի ձեռին, նախագահեց Քրիստոսի Ս. Գերեզմանին և Պատանատեղւոյն շուրջ կատարուած եռապարձ մեծահանդէս թափօրին, որ վերջացաւ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ։

● Եր. 11 Նոյմ. — Յովհաննու Ոսկեբերանին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիրս։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Տէր-պէթնեան։

● Կիր 12 Նոյմ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Գուսան Վրդ. Ալճաճեան։

● Եր. 18 Նոյմ. — Ս. Հրեշտակապետացն Գաբրիէլի եւ Միքայէլի: Ս. Պատարագը Ս. Գլխադրի մատրան մէջ մատոյց Հոգշ. Տ. Զարեհ Ծ. Վրդ. Զաքարեան (Մայր Աթոռոյ Միաբան) որ հիւրաբար կը գտնուէր մեր մէջ։ Գերշ. Տ. Սևան Եպս. նախագահեց Աղաւնի ճեմարանականի և դպրացայից հոգիներուն համար կատարուած հոգեհանգստեան կարգին։ Հրեշտակապետաց եկեղեցին նորոգութեան մէջ ըլլալուն, այս տարի եւ կարելի չեղաւ Ս. Պատարագը մատուցանել հոն։ Ջանց տանուեցաւ նմանապէս Նախատօնակը։

● Կիր. 19 Նոյմ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Ս. Էջմիածնայ խորանին վրայ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Գօլոսեան։

● Շբ. 25 Նոյմ. — Առաքեալ Անդրէի եւ Փիլիպպոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիրս։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան։

● Կիր. 26 Նոյմ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Ժամկոչեան։

● Եր. 2 Դեկտ. — Տօն Ամենայն Սրբոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիրս։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Տէր-պէթնեան։

● Կիր 3 Դեկտ. — Բարեկենդան Յիսնակի պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Գուսան Վրդ. Ալճաճեան։

— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.։

● Բշ. 4 Դեկտ. — Ընծայումն Ս. Աստուածածնի: Առաւօտուն, Գերշ. Տ. Դաւիթ Եպս. Սահակեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով իջան Գեթսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց, ուսուր պատշաճ քարոզեց և Կիւլապի Կիւլպէնկեանի և իր գերդաստանի ննջեցելոց համար կատարուած հոգեհանգստեան տարեկան պաշտամունքին նախագահեց Գերշ. Հանդիսապետ Սրբազանը։

● Եր. 9 Դեկտ. — Ս. Գր. Սքանչելագործին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիրս։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Գօլոսեան։

● Կիր. 10 Դեկտ. — Հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ, հայրենական երկրաշարժի առաջին տարելիցին առթիւ։ Պատարագեց և հոգեշունչ քարոզ մը խօսեցաւ Պատր. Փոխանորդ Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.։ Լուսարարապետ Սրբազանը նախագահեց երկրաշարժի զոհերուն համար կատարուած հանգստեան հանդիսաւոր պաշտամունքին։

● Ուր. 15 Դեկտ. — Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Դաւիթ Եպս.։

● Եր. 16 Դեկտ. — Ս. Թադէոսի եւ Բարթողիմէոսի առաքելոցն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիրս։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան։

● Կիր. 17 Դեկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Ժամկոչեան։

● Եշ. 21 Դեկտ. — Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Սևան Եպս.։

● Ուր. 22 Դեկտ. — Յղութիւն Ս. Աստուածածնի: Առաւօտուն, Գերշ. Տ. Սևան Եպս. Ղարիպեանի գլխաւորութեամբ Միաբան Հայրեր ինքնաշարժերով մեկնեցան Գեթսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց Գերշ. Հանդիսապետ Սրբազանը։

● Շբ. 23 Դեկտ. — Ս. Նիկողայոսի Սքանչելագործին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Ս. Մակարայ մատրան մէջ, անցնող Հինգշաբթի զուգադիպած Ս. Մակար Ճգնաւորի

digitised by A.R.A.R.@

(Հարցն Եգիպտացւոց) տօնին առթիւ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Թուրէն Վրդ. Յովակիմեան։ Վերաբերումը կատարուեցաւ գաւիթին մէջ գտնուող Ս. Նիկողայոսի սեղանին վրայէն։

● Կիր. 24 Դեկտ. — Բարեկենդան Ս. Յակոբայ պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Ս. Կարապետի խորանին վրայ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթճեան։

● Ուր. 29 Դեկտ. — Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Դաւիթ Եպս.։

● Շբ. 30 Դեկտ. — Ս. Յակոբայ Մծբնայ հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Գուսան Վրդ. Ալճանեան։ Վերաբերումը կատարուեցաւ գաւթին մէջ սուրբին նկարով շտկուած խորանին վրայէն։

● Կիր. 31 Դեկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնատան մատրան մէջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան։

* * *

Աւելորդ չենք նկատեր հոս տեղեակ պահել մեր ընթերցողները Ս. Աթոռէն ներս դարերու հոլովումով գոյացած կարգ մը աւանդութիւններու մասին։ Այսպէս, պաշտօններ կան, զորս առանձնող վարդապետը մասնաւոր տօն մը ունի Պատարագ մատուցանելու։ Նոր Տարուան օրը Պատարագելու իրաւունքը ժամօրհնողինն է, Ս. Ծննդեան առաւօտուն — Մայր Տաճարին մէջ — Ս. Հրեշտակապետաց վանքին Տեսչին (որ նմանապէս Պատարագ կը մատուցանէ Ս. Հրեշտակապետաց տօնի երկրորդ օրը, Կիրակի, համանուն վանքի եկեղեցիին մէջ), Ծննդեան Մեռելոցի օրը՝ Աւագ Թարգմանին, Վարդանանց տօնին՝ Ժառանգ. Վարժարանի և Ընծայարանի Տեսչին (տօնը Ժառանգաւոր սաներու տօնը նկատուած ըլլալուն, ինչպէս Ս. Ստեփաննոսինը՝ Սարկաւագաց համար), Նոր Կիրակիի օրը՝ Լուսարարապետին, Ս. Թարգմանչաց առաջնային (Սահակ-Մեսրոպ) տօնին՝ Ս. Թարգմանչաց Վարժարանի Տեսչին, Ս. Թարգմանչաց աշնանային տօնին՝ Հայ Մշակոյթի տօնը նկատուելուն՝ մեր մշակոյթի գանձերը իր մէջ ծրարած Կիւլպէնկեան Մատենադարանի Տեսչին, իսկ Հարցն Եգիպտացւոց տօնին՝ Ս. Մակարայ մատրան մէջ — որ Խոստովանանքի վայրն է — Խոստովանահօր։

Վերջերս այս դրութիւնը [illegible] կրեց կարգ մը փոփոխութիւններ։ Այսպէս, նկատի ունենալով որ ա) Կիւլպ. Մատենադարանը չունի հոգևորական Տեսուչ, և բ) Թարգմանչաց Վարժարանը փակ կ'ըլլայ աշնանային տօնին, կարգադրուած է որ Վարժարանի Տեսուչը պատարագէ աշնանային տօնին։ Իսկ Խոստովանահօր պաշտօնը փոխն ի փոխ կատարուելուն պատճառաւ չնջուած է նաև Ս. Հարցն Եգիպտացւոց տօնի օրը Պատարագ մատուցանելու առաւելութիւնը (որ արդէն ուրիշ ոչ մէկ տեղ կը կատարուի) և Ս. Մակարայ մատրան Պատարագը կը յետաձգուի Շաբաթ օրուան — Ս. Նիկողայոս Հայրապետի տօնին։

Փութանք յայտնել նաև թէ Սրբատեղեաց Տեսուչները ևս ունին իրենց հոգածութեանց յանձնուած Տաճարներուն մէջ Ս. պատարագ մատուցանելու մասնաւոր օրեր։ Այսպէս, Ս. Յարութեան Տաճարի Տեսուչը, բացի կարևոր տօներուն Ս. Գերեզմանին վրայ մատուցած իրաւունքի Պատարագներէն, Տիրամօր Վերափոխման յաջորդող Կիրակիին կը պատարագէ Տաճարի վերնատան Երաշխաւոր Ս. Ածածին մատրան մէջ, իսկ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարի Տեսուչը երկիցս, Յովակիմ-Աննայի և Յովսէփ Ածահօր տօներուն առթիւ, կը պատարագէ Տաճարի սանդղաշարքի կողքին գտնուող Հայր Յովսէփի գերեզմանի սեղանին վրայ։ (Յոյներ ալ հանդիպակաց, յունապատկան Ս. Յովակիմայ և Աննայի սեղանին վրայ կը պատարագեն երկիցս, մին՝ Ս. Աննայի Ննջման օրը (25 Յուլիս/7 Օգոստ.), միւսը Տիրամօր ծնողաց տօնին (9/22 Սեպտ.)։ Ասկէ զատ, Ս. Ածածնայ Տաճարի Տեսուչը ըլլալով նոյն ատեն Տեսուչը Համբարձման սրբատեղւոյն, ի՛նք կը մատուցանէ Ձիթենեաց լերան վրայ գտնուող յիշեալ սրբավայրի մատրան մէջ Պատարագը (միւսներն կը մատուցուին մատրան մօտ լարուած վրաններին տակ)՝ «Մեծ Պահոց Համբարձումի» առթիւ, Հսկումէն ետք, Շաբաթ, գիշերամուտին։

— Քանի մը խօսք ալ Ս. Աթոռոյս յատուկ հոգեհանգիստներու մասին։ Տարուայն ընթացքին երեք կը յիշատակուին Կիւլպէնկեանք, առաջինը Սարգիս զօրավարի տօնին, մեծանուն բարերար Գալուստի հոր անուան տօնի օրը ըլլալուն, երկրորդը Թարգմանչաց Հոկտեմբերեան տօնին՝ Գալուստի, տիկնոջ և ծնողաց հոգիներուն համար, իսկ երրորդը՝ Տիրամօր Ընծայման տօնին՝ Կիւլլապի Կիւլպէնկեանի և գերդաստանին ննջեցելոց հոգիներուն։ Մելգոնեան Եղբայրները կը յիշատակուին Խաչվերացին, մինչ Ս. Թ. Վարժարանի բարերարուհի Պոլսեցի Աղաւնի Ճէվահիրճեանն ու պարագաները՝ Ս. Հրեշտակապետաց օրը։ Իսկ Ս. Աթոռոյս երանաշնորհ Պատրիարքները իրենց յաջորդները Տեառնեղբօր՝ Դաւթի Մարգարէի և Յակոբայ Տեառնեղբօր մեծ տօնին։

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

● Եշ. 12 Հոկտ. — Երեկոյեան, Սպանիոյ ազգային տօնին առթիւ, Սպանական Ընդհ. Հիւպատոսին կոչմէ, Հիւպատոսարանի մէջ տրուած ընդունելութեան ներկայ եղան Գերշ. Լուսարարապետ Տ. Գարեգին Արքեպս., Գերշ. Տ. Սևան Եպս., Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. և Տիար Գէորգ Հինդլեան։

digitised by A.R.A.R.@

● Բշ. 16 Հոկտ. — Հրէից Սուքքոթի (Տաղաւարահարաց) տօնին առիթով, Վսեմ. Քաղաքապետ Թէտի Քոլլէքի կողմէ, Դաւթի բերդին մէջ տրուած ընդունելութեան ներկայ եղան Գերշ. Տ. Կիւրեղ Եպս., Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. և Տիար Գ. Հինդլեան։

● Գշ. 17 Հոկտ. — Ամերիկահայոց բազմամեայ Առաջնորդ և Ս. Ուխտիս Միաբան Գերշ. Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեան ժամանեց Ս. Աթոռ, ուր մնաց երեք օրեր։ Հինգշաբթի օր, Սրբազանը ուխտի Ս. Պատարագ մատոյց Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ։

— Նոյն օրը, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, հետն ունենալով Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին և Պատր. Փոխանորդ Գերշ. Տ. Կիւրեղ Սրբազանները, Լատինաց Պատրիարքարան երթալով, ցաւակցութիւն յայտնեց Պատրիարք Միշէլ Սապպահի, Նազարէթի մէջ պատահած իր մօրը մահուան տխուր առիթով։

● Կիր. 22 Հոկտ. — Կէսօրէ առաջ, Նօթր Տամի եկեղեցւոյ մէջ, Ն. Ս. Յովհաննէս-Պօղոս Բ. Պապի Գահակալութեան 11րդ տարեդարձին առթիւ, Պապական Նուիրակին կողմէ մատուցուած հանդիսաւոր Ս. Պատարագին և Մաղթանքին, և յաջորդող ընդունելութեան ներկայ եղան Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս., Գերշ. Տ. Կիւրեղ և Տ. Դաւիթ Եպիսկոպոսներ և Տիար Գէորգ Հինդլեան։

● Բշ. 23 Հոկտ. — Ամերիկեան Հիւպատոս Պր. Ուիլքօքս այցելեց Ս. Պատրիարք Հօր։

● Բշ. 30 Հոկտ. — Անթիլիասի Միաբան և Կիպրոսի Առաջն. Փոխանորդ Հոգշ. Տ. Եղիշէ Ծ. Վրդ. Մանճիկեան ժամանեց Ս. Աթոռ, ուր մնաց մէկ շաբաթ։

● Գշ. 31 Հոկտ. — Երեկոյեան, Լուտերականներու եկեղեցւոյ մէջ Reformation Dayի առիթով կատարուած արարողութեան և յաջորդող ընդունելութեան ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Դաւիթ Եպս., Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. և Տիար Գէորգ Հինդլեան։

● Դշ. 1 Նոյմ. — Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ. վերստանձնեց ժամօրհնողի իր պաշտօնը, Տ. Անուշաւան Վրդ. Եաֆա-Հայֆայի Հովուութեան գործերով զբաղուած ըլլալուն։

● Գշ. 7 Նոյմ. — Ռումանական Օրթոտոքս Եկեղեցւոյ նոր Հովիւը իր նախորդին հետ իր առաջին պաշտօնական այցելութիւնը տուաւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր։

● Ուր. 10 Նոյմ. — Հայաստանէն ժամանած երկու նախարարներ այցելեցին Մայր Տաճար և Պատրիարքարան։

● Բշ. 13 Նոյմ. — Մայր Աթոռոյ Միաբան և Ռումանահայոց Առաջնորդի օգնական Հոգշ. Տ. Զարեհ Ծ. Վրդ. Պարոնեան ժամանեց Ս. Աթոռ, ուր մնաց քանի օր։

● Գշ. 14 Նոյմ. — Հելլէն նոր Հիւպատոս Պր. Միշէլ Թամպաքիս իր առաջին պաշտօնական այցելութիւնը տուաւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր։

● Դշ. 22 Նոյմ. — Ուխտիս Միաբան Հոգշ. Տ. Գարեգին Ծ. Վրդ. Երէցեան Ամերիկայէն ժամանեց Ս. Աթոռ ուր մնաց քանի մը օր։

● Եշ. 30 Նոյմ. — Երեկոյեան, St. Andrews Dayի առթիւ (Ազգային Տօն Սկովտիոյ), Սկովտական եկեղեցւոյ մէջ կատարուած արարողութեան ներկայ եղան Գերշ. Տ. Դաւիթ Եպս., Հոգշ. Տ. Գուսան Վրդ. և Տիար Սահակ Գալայճեան։ Հայր Գուսան մեներգեց «Ուրախ լեր սուրբ եկեղեցի»։ Յետոյ ներկայ եղան նաև քոլէճի սրահին մէջ տրուած ընդունելութեան։

● Կիր. 3 Դեկտ. — Կէսօրէ ետք, Գերշ. Տ. Դաւիթ Եպս. և Աւագ Թարգման Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. ներկայ եղան Պէյթ Սահուրի մէջ Յոյն-Կաթոլիկներու Եպս. Լութֆի Լահհամի կողմէ կատարուած Աստուածաբանական ճեմարանի մը հիմնարկէքի արարողութեան։

● Գշ. 19 Դեկտ. — Հոգշ. Տ. Տ. Անուշաւան և Ռազմիկ վարդապետներ ներկայ եղան Բեթղեհէմի մօտակայքը, Լատինաց Պատրիարքին կողմէ Մայրանոցի մը (Maternity Hospital) բացման հանդիսութեան։

● Գշ. 26 Դեկտ. — Լատինաց Ս. Ստեփաննոսի տօնին առթիւ, Դոմինիկեան Հայրերու համանուն (St. Etienne) եկեղեցւոյ մէջ մատուցուած Ս. Պատարագին և ընդունելութեան ներկայ գտնուեցաւ Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան։

● Դշ. 27 Դեկտ. — Տարեփակի առիթով, Իսրայէլի Պետութեան Նախագահ Վսեմ. Հայիմ Հերցոգի ապարանքին մէջ կայացած քրիստոնէական համայնքապետներու աւանդական ընդունելութեան ներկայ գտնուեցաւ Պատր. Փոխանորդ Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գաբրիէլեան (Ամեն. Ս. Պատրիարքը հեռու էր քաղաքէն)։

● Եշ. 28 Դեկտ. — Երեկոյեան, Հրէից Խանուկայի տօնին առթիւ, Քաղաքապետ Վսեմ. Թէտի Քոլլէքի կողմէ Քաղաքապետարանի սրահին մէջ տրուած ընդունելութեան ներկայ եղան Գերշ. Տ. Կիւրեղ Եպս., Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. և Տիար Գէորգ Հինդլեան։

— Այսօր տեղի ունեցաւ Բեթղեհէմի Սուրբ Ծննդեան Տաճարի ընդհ. աւելը, ի ներկայութեան Միաբանութեան անդամներու մեծ մասին։ Մաքրութիւնը անցաւ առանց միջադէպի։

● Շբ. 30 Դեկտ. — Երեկոյեան, Սիոն լեռան Տորմիսիոն վանքի եկեղեցւոյն մէջ կայացած խաղաղութեան միջհամայնքային աղօթասացութեան ներկայ եղան Գերշ. Տ. Դաւիթ Եպս., Հոգշ. Տ. Գուսան Վրդ., Դպրապետ Տիար Սահակ Գալայճեան և Սարկաւագներ։ Սրբազանը ըրաւ համառօտ բայց պատշաճ մաղթանք աղօթք մը, իսկ Հայր Գուսան իր աղու ձայնով մեներգեց «Լոյս ի լուսոյն» Ութօրէքի տաղը։

digitised by A.R.A.R.@